ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

25.04.2017թ.

Նիստին մասնակցում էին՝ Ա. Զանգեզուրյանը, Ա. Հովեյանը, Ա. Մարուխյանը,
Վ. Ավետիսյանը, Մ. Մարինոսյանը, Ս. Գապոյանը, Գ. Դաշտոյանը, Ս. Սիրականյանը
Նիստը վարող՝ քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյան
Նիստը արձանագրող՝ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.0445հա հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
2. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
3. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի 2016թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
4. Գավառ համայնքի 2017թ. բյուջեի պահուստային ֆոնդից գումար տրամադրելու մասին:
5. Գավառ համայնքի 2017թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
6. ,,Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն'' համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող ,,Գավառի մանկատուն'' ՊՈԱԿ-ի սաներին տեղական վճարների գծով արտոնություններ տրամադրելու մասին:
7. Գավառ քաղաքի Պ. Պետրոսյանի փողոցի հյուսիսային հատվածը՝ մինչև Միքայելյան փողոցի հատման մասը Էդիկ Տոնոյանի անունով վերանվանելու մասին:
8. Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին:
9. Սեփականության իրավունքով Գավառ քաղաքային համայնքին պատկանող գույքի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
10. Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոց թիվ 1 հասցեում գտնվող, Վանիկ Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած և պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.00555հա մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու, օգտագործման ժամկետն ու վարձավճարի տարեկան չափը սահմանելու մասին:

Հարց 1

ՈՐՈՇՈՒՄ 13. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.0445ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Մ. Մանուկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Գ. Դաշտոյանը, Ս. Սիրականյանը

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը դրվեց համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.0121հա վարելահողը, բնակավայրերի նշանակության 0.0325հա այլ հողեր նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի տրանսպորտի. կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի /էներգետիկայի գործառնական նշանակության/ փոփոխման և հետագայում ուղղակի վաճառքի կարգով օտարելու վերաբերյալ, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հիմք ընդունելով 20.11.2008թ. ,,Իրան-Հայաստան 400 ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի՝ Հայաստանի Հանրապետության տարածքով անցնող հատվածի ծրագրի մասին” N1334-Ն որոշման պահանջները, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.0121հա վարելահողը, բնակավայրերի նշանակության 0.0325հա այլ հողեր նպատակային նշանակության հողամասերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ էլեկտրահաղորդման օդային գծի 2 հենասյուն կառուցելու համար: Դիմել ՀՀ կառավարության վերը նշված հարցը քննարկելու համար:
2. Համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքերը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում, Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող 05-001-1004-0008 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 0.0121հա վարելահողը և 05-001-0710-0020 ծածկագրի բնակավայրերի նշանակության 0.0325հա այլ հողեր նպատակային նշանակության հողատարածքերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա հետագայում, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի, 2-րդ կետի համաձայն ուղղակի վաճառքի կարգով օտարել ,,Բարձրավոլտ էլեկտրացանցեր” փակ բաժնետիրական ընկերությանը, մեկ քառակուսի մետրը հազար երկու հարյուր քառասուներկու /1242/ ՀՀ դրամ արժեքով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Իրան-Հայաստան 400 ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի /2 հենասյուների/ կառուցման և սպասարկման համար:
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԻՐԵԿԱՆ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

Հարց 2

ՈՐՈՇՈՒՄ 14. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Մ. Մանուկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Զանգեզուրյանը, Ա. Մարուխյանը

,,Բարձրավոլտ էլեկտրացանցեր'' փակ բաժնետիրական ընկերությունը Գավառ քաղաքային համայնքի բնակիչներից սեփականության իրավունքով ձեռք է բերել Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության 8 միավոր վարելահող 0.10512հա մակերեսով՝ ըստ հետևյալ կադաստրային ծածկագրերի 05-001-1091-0077, 05-001-1091-0075, 05-001-1089-0094, 05-001-1157-0328, 05-001-1156-0189, 05-001-1112-0762, 05-001-1157-0345, 05-001-1002-0088 հողամասերի ձեռք բերման հիմնական նպատակը Իրան-Հայաստան 400 ԿՎ երրորդ էլեկտրահաղորդման օդային գծի և համապատասխան ենթակայանի շինարարության ծրագրով նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների կառուցումն ու սպասարկումն իրականացնելն է:

Վերը նշված ծածկագրերով հողամասերում կառուցապատման աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է նշված գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հիմք ընդունելով 20.11.2008թ. ,,Իրան-Հայաստան 400ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի՝ Հայաստանի Հանրապետության տարածքով անցնող հատվածի ծրագրի մասին'' N1334-Ն որոշման պահանջները, ՀՀ գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող ,,ԲԷՑ'' ՓԲԸ սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական 05-001-1091-0077, 05-001-1091-0075, 05-001-1089-0094, 05-001-1157-0328, 05-001-1156-0189, 05-001-1112-0762, 05-001-1157-0345, 05-001-1002-0088 կադաստրային ծածկագրերով, 0.10512հա վարելահող փոխադրել էնեգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ Իրան-Հայաստան 400 ԿՎ երրորդ էլեկտրահաղորդման օդային գծի և համապատասխան ենթակայանի շինարարության ծրագրով նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների կառուցման ու սպասարկման համար:
2. Խնդրել համայնքի ղեկավարին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ կառավարության քննարկմանը:
3. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի, անդամների դրական եզրակացությունը ստանալու դեպքում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել վերը նշված հողերի նշանակության փոփոխումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԻՐԵԿԱՆ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

Հարց 3

ՈՐՈՇՈՒՄ 15. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Վ. Ավետիսյանը, Ս. Գապոյան

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 5 հունիսի 2002թ. ՀՕ-337 օրենքի 18-րդ հոդվածի 5) կետի, 38-րդ հոդվածի 1) կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 21 հուլիսի 1997թ. ՀՕ-137 օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով

Հաստատել Գավառ քաղաքային համայնքի 2016 թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

1. 2016թ. վարչական բյուջեի գծով պլանավորված 523848.6 հազ. դրամ եկամուտի դիմաց կատարվել է 489000.1 հազ. դրամ , որը կազմում է 93.3 %, որից սեփական եկամուտների դիմաց պլանավորված 155611.9 հազ. դրամ եկամուտի դիմաց կատարվել է 122189.6 հազ. դրամ , որը կաղմում է 78.5 %,

2. 2016թ. վարչական բյուջեի ծախսերի գծով պլանավորված 523914.6 հազ. դրամի դիմաց կատարվել է 487141.9 հազ. դրամ, որը կազմում է 93.0 %,

3. Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր է պլանավորվել 20642.6 հազ. դրամ, կատարվել է 19871.3 հազ. դրամ, որը կազմում է 96.3 %,

4.Ֆոնդային բյուջեի ծախսերի գծով պլանավորված 81877.7 հազ. դրամի դիմաց կատարվել է 61989.0 հազ. դրամ, որը կազմում է 75.7 %,

Գավառ քաղաքային համայնքի 2016 թ. վարչական բյուջեի եկամտային մասը ունի հետևյալ կառուցվածքը ըստ առանձին եկամտատեսակների

Եկամուտներ	Պլան	Փաստացի	Տոկոս
Վարչական բյուջեի եկամուտներ	**523848,6**	**489000,1**	93,3
Հարկեր և տուրքեր	**99643,8**	**82163,8**	82,5
Գույքային հարկեր անշարժ գույքից	**32353,8**	**19886,1**	61,5
Գույքահարկ համայնքի վ/տ գտնվող շենքերի և շինութ. համար	14580,0	11806,9	81,0
Հողի հարկ համայնքի վ/տ գտնվող հողի համար	17773,8	8079,2	45,5
Գույքային հարկեր այլ գույքից	**56000,0**	**53803,3**	96,1
Գույքահարկ փոխադրամիջոցների համար	56000,0	53803,3	96,1
Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճար	***4290,0***	***2159,3***	50,3
Տեղական տուրքեր	4290,0	2159,3	50,3
Ապրանքների մատակարարումից և ծառայությունների	**7000,0**	**6315,1**	90,2

մատուցումից այլ պարտադիր վճար			
Պետական տուրքեր ն/թ	7000,0	6315,1	90,2
ՔԿԱԳ	4000,0	3306,2	82,7
Նոտար	3000,0	3008,9	100,3
Պաշտոնական դրամաշնորհներ	**360642,0**	**359219,4**	99,6
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	327730,1	327730,1	100,0
Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	24376,4	24376,4	100,0
Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/	8535,5	7112,9	83,3
Այլ եկամուտներ	**63562,8**	**47616,9**	74,9
Գույքի վարձակալությունից եկամուտներ ն/թ	**22170,1**	**13738,2**	62,0
Համայնքի սեփ. համարվող հողերի վարձակալ վճար	18650,1	10835,6	58,1
Համայնքի վ/տ գտնվող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վճար	3000,0	2013,9	67,1
Այլ գույքի վարձակալությունից եկամուտներ	520,0	888,7	170,9
Պատվիրակված լիազորությունների ֆինանս. մուտքեր	**7594,7**	**7591,1**	100,0
Վարչական գանձումներ	**23290,5**	**24576,7**	105,5
Տեղական վճարներ	22520,0	21219,9	94,2
Համայնքի վ/տ ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	740,0	3356,8	453,6
Վարչական իրավախախտումներից մուտքեր	30,5	0,0	0,0
Այլ եկամուտներ	**10507,5**	**1710,9**	16,3

Ֆոնդային բյուջեի եկամուտներ	Պլան	Փաստացի	Տոկոս
Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ	26777,7	24177,1	90,3
Վարչական բյուջեի պ/ֆ ֆ/բ կատարվող հատկացում	55100,0	37811,9	68,6

Գավառ քաղաքային համայնքի 2016թ. վարչական և ֆոնդային բյուջեների ծախսային մասերը ունեն հետևյալ կառուցվածքները ըստ գործառական դասակարգման

Ծախսերի անվանումը	Պլան	Փաստացի	Տոկոս
Ընհանուր բնույթի հանրային ծառայություններ	**81533,3**	**76713,9**	**94,1**
Օրենսդիր և գործադիր մարմիններ	60442,6	57659,6	95,4
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	8240,7	8231,9	99,9
Ընհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/	12850,0	10822,4	84,2

Պաշտպանություն	500,0	0,0	0,0
Տնտեսական հարաբերություններ	16250,0	14640,0	90,1
Շրջակա միջավայրի պաշտպանություն	75369,6	72231,8	95,8
Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն	15810,0	13600,5	86,0
Հանգիստ, մշակույթ և կրոն	64004,3	63661,0	99,5
Կրթություն	199347,4	193173,3	96,9
Սոցիալական պաշտպանություն	6000,0	5990,0	99,8
Պահուստային ֆոնդ	65100,0	47131,4	72,4
ԸՆԴԱՄԵՆԸ	**523914,6**	**487141,9**	**93,0**

Ծախսերի անվանումը	Պլան	Փաստացի	Տոկոս
Ընհանուր բնույթի հանրային ծառայություններ	**1980,0**	**1906,0**	96,3
Օրենսդիր և գործադիր մարմիններ	1980,0	1906	96,3
Ընհանուր բնույթի այլ ծառայություններ	0,0	0,0	0,0
Տնտեսական հարաբերություններ	-7407,7	-10633	143,5
Շրջակա միջավայրի պաշտպանություն	3940,0	2430,1	61,7
Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն	26849,5	23821,2	88,7
Հանգիստ, մշակույթ և կրոն	29172,8	19739,1	67,7
Կրթություն	27343,1	24725,6	90,4
ԸՆԴԱՄԵՆԸ	**81877,7**	**61989,0**	**75,7**

Գավառ քաղաքային համայնքի 2016թ. վարչական և ֆոնդային բյուջեների ծախսային մասերը ունեն հետևյալ կառուցվածքները ըստ տնտեսագիտական դասակարգման

Ծախսերի անվանումը		Պլան	Փաստացի	Տոկոս
Աշխատողների աշխատավարձեր	4111	52548,6	49966,3	95,1
Պարգևատրում	4112	3000,0	3000,0	100,0
Էներգետիկ ծառայություններ	4212	8155,0	7134,7	87,5
Կոմունալ ծառայություններ	4213	300,0	112,5	37,5
Կապի ծառայություններ	4214	1315,8	1106,5	84,1
Ապահովագրական ծախսեր	4215	60,0	58,0	96,7
Ներքին գործուղումներ	4221	200,0	98,0	49,0
Համակարգչային ծառայություններ	4232	649,0	640,2	98,6

Տեղեկատվական ծառայություններ	4234	3498,7	3322,6	95,0
Ընդանուր բնույթի այլ ծառայություններ	4239	8483,9	8284,4	97,6
Մասնագիտական ծառայություններ	4241	4266,2	3255,3	76,3
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	20500,0	18140,0	88,5
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	4252	600,0	586,0	97,7
Գրասենյակային նյութեր	4261	650,0	561,3	86,4
Տրանսպորտային նյութեր	4264	3600,0	3502,5	97,3
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	1000,0	411,6	41,2
Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1400,0	1372,8	98,1
Սուբսիդիաներ	4511	269598,3	263713,9	97,8
Ընթացիկ դրամաշնորհ	4637	9915,5	8492,9	85,7
Կապիտալ դրամաշնորհ	4655	4720,0	4611,8	97,7
Այլ կապիտալ դրամաշնորհ	4657	18403,6	16924,2	92,0
Այլ նպաստներ բյուջեից	4729	8000,0	7490,0	93,6
Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդ. կազմակերպ.	4819	36050,0	36033,5	100,0
Պարտադիր վճարներ	4823	1900,0	1191,5	62,7
Պահուստային ֆոնդ	4891	65100,0	47131,4	72,4
ԸՆԴԱՄԵՆԸ		**523914,6**	**487141,9**	**93,0**

Ծախսերի անվանումը		Պլան	Փաստացի	Տոկոս
Շենք և շինությունների կառուցում	5112	36863,6	25614,4	69,5
Շենք և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	53855,8	46539,2	86,4
Տրանսպորտային սարքավորումներ	5121	0,0	0,0	0,0
Վարչական սարքավորումներ	5122	930,0	856,0	92,0
Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	3750,0	2388,6	63,7
Աճեցվող ակտիվներ	5131	940,0	791,5	84,2
Նախագծահետազոտական ծախսեր	5134	6180,9	5670,6	91,7
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր		-20642,6	-19871,3	96,3
ԸՆԴԱՄԵՆԸ		**81877,7**	**61989,0**	**75,7**

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԻՐԵԿԱՆ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

Հարց 4

ՈՐՈՇՈՒՄ 16. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Գ. Դաշտոյանը, Ա. Հովեյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության ՀՕ-337 օրենքի 90-րդ հոդվածների պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ համայնքի 2017թ. բյուջեի պահուստային ֆոնդից

1. Սիրիայի Հանրապետությունից արտագաղթած, այժմ՝ Գավառ քաղաքում բնակվող և Գավառի բժշկական կենտրոն ՊՈԱԿ-ում ախատող բժիշկներ Վարանեթ Կիրակոսյանին և Հակոբ Թամեղյանին 4729 /այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 360 000 /երեք հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն իրենց կողմից վարձակալած բնականների ծախսերին օժանդակելու համար /յուրաքանչյուրին տրամադրելով 180 000 /մեկ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Գավառ քաղաքի ,,Ուսուցողական կենտրոն'' ՀՈԱԿ-ին տրամադրել 255 000 /երկու հարյուր հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ, որից 4655 /կապիտալ դրամաշնորհ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին/ տնտեսագիտական հոդվածով 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ գորգագործություն և հագուստի մոդելավորում խմբակին կարի մեքենա ձեռք բերելու համար, իսկ 4511 /սուբսիդիաներ համայնքային կազմակերպություններին/ տնտեսագիտկան հոդվածով 105000 /մեկ հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ որպես լրացուցիչ ֆինանսավորում:

3. ,,Զվարթնոց'', ,,Վերածնունդ'' և մի շարք այլ երգի փառատոնների հաղթող ճանաչված Գավառի ,,Հայրապետ Խաչատրյանի (Կոլոտի) անվան արվեստի դպրոց'' ՀՈԱԿ-ի վոկալի դասարանի սաների՝ Մարիաննա Բրսիկյանի, Սաթենիկ Սահակյանի և Ռազմիկ Աչիկյանի խմբի ղեկավար Լիա Տոնոյանին 4729 /այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ Իտալիայի Հանրապետությունում 2017թ. մայիս-հունիս ամիսներին կայանալիք ,,CHORUS INSIDE'' միջազգային երգի մրցույթ փառատոնի հրավերին մասնակցություն ապահովելուն օժանդակելու համար:

4. Գեղարքունյաց թեմի Գավառի Ս. Կարապետ եկեղեցու ամենամյա ուխտի օրվա տոնակատարությունների մատաղի արարողության միջոցառումն իրականացնելու նպատակով 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 850 000 /ութ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

5. Հիմք ընդունելով բնական աղետի /ուժեղ քամիներ/ հետևանքով իր անհատական բնակելի տան և օժանդակ շինության տանիքների քանդման վերաբերյալ Գավառ քաղաքի բնակիչ Կարապետ Ավետիքի Մուրադյանի դիմումի հիման վրա Գավառի քաղաքապետարանի աշխատակիցներից ձևավորված հանձնաժողովի 2017թ. ապրիլի 13-ի արձանագրությունը, 4729 /այլ նպաստներ բյուջեից/

տնտեսագիտական հոդվածով Կարապետ Մուրադյանին տրամադրել 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ դրամական օգնություն:

6. ,,Արամ Խաչատրյան'' համերգասրահում մայիսի 24-ին կայանալիք Գոհար Խաչատրյանի մենահամերգի 15 տոմս ձեռք բերելու համար 4861 /այլ ծախսեր/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 75 000 /յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԻՐԵԿԱՆ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

Հարց 5

ՈՐՈՇՈՒՄ 17. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Հովեյանը, Ա. Մարուխյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5) կետի, 38-րդ հոդվածի 1) կետի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ համայնքի 2017թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Հիմք ընդունելով Գավառի քաղաքապետարանի և ՀՀ Արդարադատության նախարարության միջև 2017թ. փետրվարի 27-ին կնքված ,,ՔԿԱԳ ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում'' ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում Գավառ համայնքի ղեկավարին լիազորությունների պատվիրակման N18 պայմանագիրը, Գավառ համայնքի 2017թ. բյուջեի եկամտային մասը՝ տող 1342, պակասեցնել 300 /երեք հարյուր/ ՀՀ դրամով:

   Ծախսային մասում 01 բաժնի 3 խմբի 3 դասի /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ գործառնական դասակարգման 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 60300 /վաթսուն հազար երեք հարյուր/ ՀՀ դրամով, որից 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամը ավելացնել նույն գործառնական դասակարգման 4252 /մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում/ տնտեսագիտական հոդվածին:

2. 08 բաժնի 2 խմբի 7 դասի /հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 8300 000 /ութ միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամով, որից՝

   1) 3700000 /երեք միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամը ավելացնել 09 բաժնի 2 խմբի 1 դասի /հիմնական ընդհանուր կրթություն/ գործառնական դասակարգման 5113, 5134 և 5122 տնտեսագիտական հոդվածներին, որից 5113 /շենք և շինությունների կապիտալ վերանորոգում/

տնտեսագիտական հոդվածին 2688600 /երկու միլիոն վեց հարյուր ութսունութ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 71400 /յոթանասունմեկ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ. իսկ 5122 /վարչական սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածին՝ 940000 /ինն հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ՝ Գավառի թիվ 7 հիմնական դպրոցի ,,Արման Ալիկի Ղանդիլյանի անվան ՆԶՊ դասասենյակի" հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի, կապիտալ վերանորոգման աշխատանքների և գույքի ձեռք բերման համար:

2) 2600000 /երկու միլիոն վեց հարյուր հազար/ ՀՀ դրամը ավելացնել 04 բաժնի 5 խմբի 1 դասի /ճանապարհային տրանսպորտ/ գործառնական դասակարգման 5113 և 5134 տնտեսագիտական հոդվածներին, որից 5113 /շենք և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածին՝ 2520000 /երկու միլիոն հինգ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, իսկ 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ՝ Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գետեռն Միքայելյան փողոցի 2-րդ նրբանցք /Գլանոց կոչվող հատվածը/ հասցեի ճանապարհների խճապատման և հարթեցման նախագծահաշվային փաստաթղթերի և աշխատանքների ձեռք բերման համար:

3) 2 000000 /երկու միլիոն/ ՀՀ դրամը ավելացնել 08 բաժնի 2 խմբի 1 դասի /գրադարաններ գործառնական դասակարգման 5112 և 5134 տնտեսագիտական հոդվածներին, որից 5112 /շենք և շինությունների կառուցում/ տնտեսագիտական հոդվածին 1 940 000 /մեկ միլիոն ինն հարյուր հազար/ ՀՀ դրամ, իսկ 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին 60 000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ որպես ծրագրի համաֆինանսավորում՝ ,Ջինիշյան" հիշատակի հիմնադրամի ,,Ակտիվ երիտասարդները փոփոխության համար 2016-2018թթ." ծրագրի շրջանակներում ,,Կանաչ քաղաք" նախաձեռնող խմբի կողմից ,,Գավառի քաղաքային գրադարան" ՀՈԱԿ-ի բակում վերը նշված ծրագրի աշխատանքներն իրականացնելու համար:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԻՐԵԿԱՆ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

Հարց 6

ՈՐՈՇՈՒՄ 18. ,,ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՃԱԽՈՂ ,,ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ" ՊՈԱԿ-Ի ՍԱՆԵՐԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ.Ա. Գևորգյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Վ. Ավետիսյանը, Մ. Մարինոսյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, ,,Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19)կետի, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով կազմակերպություն հաճախող

մանկատան սաներին համայնքի պատվերով ծառայությունների մատուցման համար տեղական վճարներից ազատելու մասին ,,Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն'' համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի դիմումը, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ,,Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն'' համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող ,,Գավառի մանկատուն'' պետական ոչ առևտրային կազմակերպության սաներ Մարիամ Ալեքսանի Պետրոսյանին, Քրիստինե Պավլիկի Մելիքյանին, Մարիա Գարիի Սարգսյանին, Զոհրապ Անդրանիկի Մելիքյանին և Թագուհի Պավլիկի Ենգիբարյանին 2017 թվականի մարտ ամսից ազատել համայնքի պատվերով ,, ,,Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն'' համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից ծառայությունների մատուցման համար տեղական վճարներից:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԻՐԵԿԱՆ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

Հարց 7

ՈՐՈՇՈՒՄ 19. ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ Պ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՓՈՂՈՑԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԸ՝ ՄԻՆՉԵՎ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՏՄԱՆ ՄԱՍԸ ԷԴԻԿ ՏՈՆՈՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/զեկ. Գ. Բոշյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Զանգեզուրյանը, Ս. Սիրականյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' ՀՀ օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով, հաշվի առնելով նախաձեռնող խմբի խնդրանքը, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ քաղաքի Պ. Պետրոսյանի անվան փողոցի հյուսիսային հատվածը՝ մինչև Միքայելյան փողոցի հատման մասը վերանվանել Էդիկ Տոնոյանի անվամբ:

Կողմ (7) Դեմ (1) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԻՐԵԿԱՆ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 8.

ՈՐՈՇՈՒՄ 20. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Բոշյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Մարուխյանը, Գ. Դաշտոյանը

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին'' ՀՀ օրենքի 15 հոդվածի 3 կետի, և ,,Տեղական Ինքնակառավարման մասին '' ՀՀ օրենքի 18 հոդվածի 42) կետի դրույթներով, նկատի ունենալով, որ ներքոհիշյալ կազմակերպությունները վճարել են իրենց շենքերի և շինությունների գույքահարկի և հողի հարկի մայր գումարները, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ կից ցուցակով ներկայացված անձանց նկատմամբ սահմանել հարկային արտոնություն

Հ/Հ	ՀՎՀՀ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿԸ	ՏՈՒՅԺ
1	08413852	ԳԱՎԱՌՏՐԱՆՍ ՍՊԸ	շին. հող.	593200 8850
2	08400611	ՆՈՐ ՈՒՂԻ ԱԿ	ավտ.	17100

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԻՐԵԿԱՆ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

Հարց 9

ՈՐՈՇՈՒՄ 21. 21 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՊԱՐՏԱԴԻՐ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ.Ա. Գևորգյան/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Վ. Ավետիսյանը,Մ. Մարինոսյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' ՀՀ օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32) կետի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Գավառ քաղաքային համայնքի 2017թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԻՐԵԿԱՆ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

Հարց 10

ՈՐՈՇՈՒՄ 22. ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԲՈՇՆԱՂՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0.00555ՀԱ ՄԵԿԵՐՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ.Ա. Գևորգյան/

ԱՐՏԱՅԱՏՎԵՑԻՆ Մ. Մարինոսյանը, Վ. Ավետիսյանը

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' ՀՀ օրենքի 20-րդ և 60-րդ հոդվածների, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի, ՀՀ հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով ,,Գավառ քաղաքի Բոշնաղյան 1/17 հասցեի բնակիչ Վանիկ Օհանյանի կողմից կառուցված ինքնակամ շինությունը օրինականացնելու և շինության զբաղեցրած հողատարածքը վարձակալությամբ տրամադրելու մասին'' Գավառի քաղաքապետի 19.08.2005թ. թիվ 112 որոշումը, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Վանիկ Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոց թիվ 1 հասցեում գտնվող ավտոտնակի զբաղեցրած և պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.00555հա մակերեսով հողամասը մինչև 2050 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օգտագործման ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել ավտոտնակի սեփականատիրոջը:
2. Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 16650 /տասնվեց հազար վեց հարյուր հիսուն/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՄՀԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԻՐԵԿԱՆ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ